

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2019

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Նկարում *Ա* տառով նշված է.

- 1) ողողատը
- 2) գետաբերանը
- 3) գետի հունը
- 4) գետի ակունքը



2

Յուրաքանչյուր ժամային գոտի ընկած է 2 միջօրեականների միջև, որոնք իրարից հեռու են.

- 1) 45°
- 2) 15°
- 3) 90°
- 4) 60°

3

Պրահա (արլ. ե. 14°) և Տոկիո (արլ. ե. 140°) քաղաքների գոտիական ժամանակների տարբերությունը կլինի.

- 1) 4 ժամ
- 2) 6 ժամ
- 3) 8 ժամ
- 4) 2 ժամ

4

Մթնոլորտի ազդեցության հետևանքով առաջանում են.

- 1) մակընթացությունը և տեղատվությունը
- 2) գեյզերները
- 3) ծովային հոսանքները
- 4) տարվա եղանակները

5

Ամառային մուսսոնին հատուկ են.

- 1) շոգ եղանակները
- 2) չոր եղանակները
- 3) անձրևային եղանակները
- 4) ցուրտ եղանակները

6

Օրվա ընթացքում վայրի եղանակի փոփոխություններն ամենից առաջ պայմանավորված են.

- 1) օդի խոնավության փոփոխություններով
- 2) հորիզոնի նկատմամբ Արեգակի բարձրության փոփոխությամբ
- 3) մթնոլորտային ճնշման փոփոխություններով
- 4) քամու ուղղության և արագության փոփոխությամբ

7

Որն է տարածքի տեղումների տարեկան քանակը կախված չէ.

- 1) օվկիանոսների և ծովերի նկատմամբ վայրի ունեցած հեռավորությունից
- 2) օվկիանոսի ջրիաղիությունից
- 3) ծովային հոսանքների տեսակից
- 4) գերիշխող քամիների ուղղությունից

8


Արշավախումբը հս. լ. 6°, արմ. ե. 86° կոորդինատից շարժվեց հարավ՝ օրական անցնելով 33,3 կմ ճանապարհ: Արշավախմբի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները 35 օր անց կլինեն.

- 1) հվ. լ. 4.5°, արմ. ե. 86°
- 2) հս. լ. 4.5°, արմ. ե. 86°
- 3) հվ. լ. 10.5°, արմ. ե. 86°
- 4) հս. լ. 10.5°, արմ. ե. 86°

9

Գծագրում ցույց տրված շեղման ուղղությունները ո՞ր կիսագնդին են վերաբերում:


- 1) հարավային
- 2) արևելյան
- 3) արևմտյան
- 4) հյուսիսային



10

Նկարում n ը թվով է նշված ամենացածր մթնոլորտային ճնշումը.

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 1



11

«Մայրցամաք — անապատներ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Աֆրիկա — Կալահարի և Նամիբ
- 2) Հարավային Ամերիկա — Լիբիական և Նուբիական
- 3) Ավստրալիա — Ավազային մեծ անապատ և Վիկտորիա մեծ անապատ
- 4) Եվրասիա — Գոբի և Տակլա Մական

12

Ո՞ր կլիմայական գոտում կլիմայական մարզեր չեն առանձնացվում.

- 1) բարեխառն
- 2) արևադարձային
- 3) հասարակածային
- 4) մերձարևադարձային

13

Բնութագրումով որոշել գետը.

Այս գետը Եվրասիայի արևելյան մասում է և թափվում է Դեղին ծովը: Հայտնի է իր վարարումներով, որոնք կապված են մուսսոնային անձրևների հետ: Ո՞րն է այդ գետը.

- 1) Յանգզի
- 2) Մեկոնգ
- 3) Ամուր
- 4) Հուանհե

14

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրի ձգողության ուժի հետևանքով ծանր նյութերն իջել են ներքև, թեթևները՝ բարձրացել:
- 2) Երկրի ձգողական մեծ ուժի շնորհիվ օդը, մարմինները չեն հեռանում նրանից:
- 3) Երկրի մագնիսական և աշխարհագրական բևեռները, հետևաբար նաև աշխարհագրական և մագնիսական միջօրեականները համընկնում են:
- 4) Գնդաձևության շնորհիվ նույն պահին Երկրի մակերևույթի տարբեր լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:

15

Ո՞ր սահմանումն է սխալ.

- 1) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ աշխարհագրական լայնության կոչվում է լայնակի կամ հորիզոնական զոնայականություն:
- 2) Մայրցամաքների և օվկիանոսների սահմաններում առանձնացվող, երկրագունդը հասարակածից բևեռներ ուղղությամբ գոտևորող բնատարածքային համալիրները կոչվում են բնական զոնաներ:
- 3) Աշխարհագրական թաղանթի այն մասը, որը հարակից տեղանքներից տարբերվում է իր ինքնատիպ մակերևույթով, կլիմայով, ջրերով, հողաբուսական ծածկույթով, կենդանական աշխարհով, այդ բաղադրիչների կապերով ու փոխազդեցություններով, կոչվում է բնատարածքային համալիր:
- 4) Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է վերընթաց գոտիականություն:

16

«Գետ — օվկիանոս» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Կոլումբիա — Հյուսիսային սառուցյալ
- 2) Պարանա — Ատլանտյան
- 3) Մաքենզի — Իսադաղ
- 4) Նիգեր — Հնդկական

17

Ո՞ր թերակղզիներն են մխրճվում Մեքսիկական ծոց.

- 1) Յուկատան և Լաբրադոր
- 2) Ֆլորիդա և Յուկատան
- 3) Յուկատան և Կալիֆոռնիա
- 4) Ֆլորիդա և Կալիֆոռնիա

18


Ո՞ր շարքի գետերն են հոսում արևմուտքից արևելք ուղղությամբ.

- 1) Դնեպր, Իրավադի, Ենիսեյ
- 2) Դանուբ, Ամուր, Յանցզի
- 3) Օբ, Լենա, Վոլգա
- 4) Ինդոս, Մեկոնգ, Տիգրիս

19

Ո՞ր ծոցն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Սուրբ Լավրենտիոսի
- 2) Հուդզոնի
- 3) Մեքսիկական
- 4) Ֆանդի



20

Ո՞ր գետն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Միսսիսիպի
- 2) Կոլորադո
- 3) Կոլումբիա
- 4) Ռիո Գրանդե

21

Աջանային գիշերահավասարի օրը հյուսիսային կիսագնդում.

- 1) ամառ է
- 2) աշուն է
- 3) ձմեռ է
- 4) գարուն է

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Վերխոյանսկի և Չերսկու լեռները Խաղաղօվկիանոսյան գեոսինկլինալային գոտում են:
- 2) Կուր-Արաքսյան հարթավայրն առաջացել է պլատֆորմի վրա:
- 3) Դրակոնյան լեռները հին են և քայքայված:
- 4) Սկանդինավյան լեռներն առաջացել են ալպյան լեռնակազմության ժամանակ:

23

Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում մարտի 21-ի կեսօրին կազմում է մոտ.

- 1) 50°
- 2) $73,5^\circ$
- 3) 90°
- 4) $26,5^\circ$

24


Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է:
- 2) Բնակչության խտությամբ գերազանցում է Եվրոպայի մյուս տարածաշրջաններին:
- 3) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են խոշոր գյուղական բնակավայրերը:
- 4) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:

25

Դիագրամում տրված է աշխարհի բնակչության բաշխումն՝ ըստ ծովից ունեցած հեռավորության: Ո՞ր հեռավորության գոտուն է համապատասխանում 2 թիվը.

- 1) 50–200 կմ
- 2) 500–1000 կմ
- 3) 1000 կմ–ից ավելի
- 4) մինչև 50 կմ



26

«Ժողովրդագրական պայթյունի» գլխավոր պատճառն է.

- 1) կանանց կրթական մակարդակի բարձրացումը
- 2) զարգացող երկրներում քաղաքաբնակների թվի ավելացումը
- 3) զարգացող երկրներում բնակչության մահացության նվազումը ծնելիության բարձր մակարդակի պահպանման պայմաններում
- 4) զարգացած երկրներում բնակչության բարձր բնական աճը

27

Քաղաքների աճի ու զարգացման գործընթացն՝ ի հաշիվ արվարձանների, կոչվում է.

- 1) կեղծ ուրբանիզացում
- 2) սուբուրբանիզացում
- 3) տարաբնակեցում
- 4) ուրբանիզացում

28

Բնութագրումով որոշել պետությունը.

Այս ծովային պետությունն աշխարհի զարգացած և հզորագույն երկրներից է: Ամենաբարձր գազաթը գործող հրաբուխ է: Միազգ պետություն է: Աչքի է ընկնում բնակչության բարձր միջին խտությամբ: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Ճապոնիան
- 2) Չինաստանը
- 3) Հնդկաստանը
- 4) Ռուսաստանը

29

Որքա՞ն կկազմի երկրի բնակչության մահացության ցուցանիշը, եթե ծնելիությունը 24 ‰ է, բնական աճը՝ 18 ‰.

- 1) 16 ‰
- 2) 42 ‰
- 3) 6 ‰
- 4) 9 ‰

30

«Պետություն — պետական կառավարման ձև» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Գերմանիա — նախագահական հանրապետություն
- 2) ԱՄՆ — խորհրդարանական հանրապետություն
- 3) Նիդերլանդներ — սահմանադրական միապետություն
- 4) Ճապոնիա — բացարձակ միապետություն

31

Ո՞ր շարքի բոլոր երկրներն ունեն դաշնային պետական կառուցվածք.

- 1) Կանադա, Բրազիլիա, Գերմանիա, Հնդկաստան
- 2) Իրան, Լեհաստան, Արգենտինա, Ֆրանսիա
- 3) Ճապոնիա, Շվեյցարիա, Նիգերիա, Եգիպտոս
- 4) Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ավստրալիա

32

«Արտադրանք — արդյունաբերության ճյուղ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) պլաստմասսա — մեքենաշինություն
- 2) կաուչուկ — քիմիական արդյունաբերություն
- 3) պողպատ — մետաղաձուլություն
- 4) տրիկոտաժ — թեթև արդյունաբերություն

33

Ո՞ր շարքի երկրներն են առաջատար պողպատի ձուլմամբ.

- 1) Իրան, Ռուսաստան, Թուրքիա
- 2) Չինաստան, Ճապոնիա, Հարավային Կորեա
- 3) ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա
- 4) Ավստրալիա, Ֆրանսիա, Իտալիա

34

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Նավթի համաշխարհային պաշարների շուրջ 9/10–ը կենտրոնացված է զարգացած երկրներում:
- 2) Մակրոնթացային էլեկտրակայանները շրջակա միջավայրը չեն աղտոտում:
- 3) Էլեկտրաէներգիայի համաշխարհային արտադրության 50 %-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին:
- 4) Վառելիքային արդյունաբերությունը զբաղվում է էլեկտրաէներգիայի արտադրությամբ և այն սպառողին մատակարարելով:

35

Աքվակուլտուրա է կոչվում.

- 1) ծովային օրգանիզմների բնական վերարտադրությունը
- 2) ծովից հանքային ռեսուրսների արդյունահանումը
- 3) ձկների և ջրային այլ կենդանիների արհեստական բուծումը փակ ջրավազաններում
- 4) ձկների և այլ ծովային օրգանիզմների որսը

36

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ԳՏՀ–ի շնորհիվ արտադրության տեղաբաշխման վրա բնական գործոնների ազդեցությունը սկսում է մեծանալ:
- 2) ԳՏՀ–ի ազդեցությամբ միջազգային առևտրի ապրանքային կառուցվածքում նվազել է պատրաստի արտադրանքի բաժինը, ավելացել է հումքի և վառելիքի բաժինը:
- 3) ԳՏՀ–ի բնորոշ գիծն է գիտության սրընթաց զարգացումը, որի արդյունքում գիտությունը վերաճում է անմիջական արտադրողական ուժի:
- 4) ԳՏՀ–ի շնորհիվ արտադրությունը տեղաբաշխվում է գիտական և կրթական կենտրոններից բավականին հեռու:

37

Ներքին ջրային տրանսպորտը զարգացած է.

- 1) Ճապոնիայում
- 2) Գերմանիայում
- 3) Իրանում
- 4) Հայաստանում

38

Բնութագրումով որոշել արդյունաբերության ճյուղը.

Արդյունաբերության այս ճյուղն ունի լայն հումքային բազա. բնական հանքային հումք, արդյունաբերության այլ ճյուղերի թափոններ: Ո՞ր ճյուղն է.

- 1) մեքենաշինությունը
- 2) մետաղաձուլությունը
- 3) թեթև արդյունաբերությունը
- 4) քիմիական արդյունաբերությունը

39

Թուրքիային սահմանակից են.

- 1) Սաուդյան Արաբիան և Վրաստանը
- 2) Սիրիան և Հունաստանը
- 3) Օմանը և Ռուսաստանը
- 4) Իսրայելը և Իրանը

40

Բնութագրումով որոշել պետությունը.

Հյուսիսային Եվրոպայի այս պետությունը աշխարհում առավել խտաբնակներից է: Աչքի է ընկնում ուրբանիզացման բարձր մակարդակով: Մայրաքաղաքը ծովային խոշոր նավահանգիստ է: Ո՞րն է այդ պետությունը.

- 1) Մեծ Բրիտանիան
- 2) Ֆինլանդիան
- 3) Շվեդիան
- 4) Նորվեգիան

41

Հնդկաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սև մետաղաձուլությունը տեղաբաշխված է երկրի արևմուտքում:
- 2) Հանքային հումքի բացակայության պատճառով արդյունաբերության կառուցվածքում բացակայում է քիմիական արդյունաբերությունը:
- 3) Թեթև արդյունաբերության առաջատար ճյուղերից է բամբակյա գործվածքների արտադրությունը:
- 4) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ատոմային էլեկտրակայաններում:

42

ԱՄՆ-ի Կենտրոնական հարթավայրերի հյուսիսում ձևավորվել է.

- 1) «եզիպտացորենի գոտին»
- 2) «ցորենի գոտին»
- 3) «բամբակենու գոտին»
- 4) «բրնձի գոտին»

43

Ո՞ր գետերի միախառնումից է առաջանում Շատ-Էլ-Արաբ գետը.

- 1) Արաքս և Կուր
- 2) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս
- 3) Տիգրիս և Եփրատ
- 4) Արևմտյան Եփրատ և Արևելյան Եփրատ

44

«Գետ — ակունք» գույգերից ընտրել սխալը.

- 1) Արաքս — Բյուրակն լեռնազանգված
- 2) Արածանի — Ծաղկանց լեռներ
- 3) Տիգրիս — Վասպուրականի լեռներ
- 4) Արևմտյան Եփրատ — Ծաղկավետ լեռներ

45

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Ուրմիա լճի ավազանում:
- 2) Տեղումների քանակն ամենաքիչը Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների հատակային մասերում է՝ 300 մմ-ից պակաս:
- 3) Միջնաշխարհում տարեկան տեղումների միջին քանակը 1000–1200 մմ է:
- 4) Օդի բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տատանման լայնություն անցնում է 90°C-ից:

46

ՀՀ լեռնագրության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:
- 2) Աշոցքի սարահարթում են Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները:
- 3) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:
- 4) Սևանա լիճը եզրավորված է միայն ծալքաբեկորավոր լեռներով:

47

Փոքր քիմիայի արտադրատեսակներ են.

- 1) ացետիլենը և քլորոպրենային կաուչուկը
- 2) ծծմբաթթուն և պղնձարջասպը
- 3) քիմիական ռեակտիվները և վիտամինները
- 4) լաքերը և պլաստմասսան

48

«Վարչական շրջան — կենտրոն» գույզերից ընտրել *սխալը*.

- 1) Հաղրութ — Հաղրութ
- 2) Մարտակերտ — Մարտակերտ
- 3) Շահումյան — Քարվաճառ
- 4) Ասկերան — Ստեփանակերտ

49


Տավուշի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Հարուստ է բենթոնիտային կավերի պաշարներով:
- 2) Մարզի տարածքում կան գորշ ածխի պաշարներ:
- 3) Ընդերքը հարուստ է մետաղային օգտակար հանածոներով:
- 4) Հարուստ է հանքային աղբյուրներով:

50

Ո՞ր օվկիանոսային հոսանքն է քարտեզում նշված Ա տառով.

- 1) Բրազիլական
- 2) Ֆոլկլենդյան
- 3) Պերուական
- 4) Գվիանական



51

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Ջ տառով.

- 1) Հավանա
- 2) Ասունսիոն
- 3) Կարակաս
- 4) Բոգոտա

52

Վայրի հասցազինների պահպանության ու վերարտադրության նպատակով կազմակերպված ՀՀ հատուկ պահպանվող տարածքներից է.

- 1) Դիլիջանի ազգային պարկը
- 2) Շիկահողի արգելոցը
- 3) Խոսրովի արգելոցը
- 4) Էրեբունիի արգելոցը

53

Ջրային ռեսուրսներով հարուստ երկրներ են.

- 1) ԱՄԷ-ն և Կատարը
- 2) Նորվեգիան և Ֆինլանդիան
- 3) Լիբիան և Սաուդյան Արաբիան
- 4) Քուվեյթը և Եգիպտոսը

54

Ո՞ր բնական ռեսուրսներով են համեմատաբար աղքատ լեռնային տարածքները.

- 1) մետաղային
- 2) ռեկրեացիոն
- 3) վառելիքային
- 4) ջրաէներգետիկ

55

Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.

- 1) ռեսուրսի գնահատում
- 2) ռեսուրսախնայողություն
- 3) ռեսուրսի տեղաբաշխում
- 4) ռեսուրսապահովվածություն

56

Գրել նավարկելի ջրանցքների համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Չոնդյան | 5) Բերինգի |
| 2) Սուեզի | 6) Պանամայի |
| 3) Թաթարական | 7) Կուկի |
| 4) Ֆլորիդայի | 8) Քիլի |

57

Գրել Խաղաղ օվկիանոսում և նրա ծովերում գտնվող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|---------------|---------------|
| 1) Շպիցբերգեն | 5) Ճամայկա |
| 2) Թայվան | 6) Շրի Լանկա |
| 3) Ֆիջի | 7) Իսլանդիա |
| 4) Հավայան | 8) Ֆիլիպինյան |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|----------------------|----------------------------|
| 1) Արևելաավստրալական | 5) Կուրո Սիո |
| 2) Ալյասկայի | 6) Ասեդի հրվանդանի |
| 3) Գվինեական | 7) Հյուսիսխաղաղօվկիանոսյան |
| 4) Գվիանական | 8) Գոլֆստրիմ |

59

Գրել այն կենդանատեսակների համարները, որոնք հիմնականում տարածված են Հյուսիսային Ամերիկայում.

- | | |
|----------------|--------------|
| 1) ցեցե | 5) բադակտուց |
| 2) էմու ջայլամ | 6) եքիդնա |
| 3) կենգուրու | 7) կոնդոր |
| 4) բիզոն | 8) կարիբու |

60

Գրել այն պետությունների համարները, որոնք սահմանակցում են Ֆրանսիային.

- | | |
|------------------|-----------------|
| 1) Լյուքսեմբուրգ | 5) Դանիա |
| 2) Լիխտենշտայն | 6) Նիդերլանդներ |
| 3) Բելգիա | 7) Ավստրիա |
| 4) Պորտուգալիա | 8) Ման Մարինո |

61

Գրել հրաբխային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|---------|-------------------|
| 1) Պարզ | 5) Արմադանի |
| 2) Ակնա | 6) Այդր (Մեծամոր) |
| 3) Ալ | 7) Սև |
| 4) Քարի | 8) Փարվանա |

62

Տրված պետությունները դասավորել երկաթուղիների երկարության նվազման կարգով.

- 1) ԱՄՆ
- 2) Հնդկաստան
- 3) Ռուսաստան
- 4) Գերմանիա

63

ՀՀ տրված հողային տիպերի համարները դասավորել ըստ հումուսի պարունակության հետևյալ հաջորդականությամբ՝ 4–11 %, 1–2 %, 8–13 %.

- 1) մարգագետնատափաստանային
- 2) լեռնային սևահողեր
- 3) կիսաանապատային գորշ հողեր

(64-65). Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 500 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ $+28^{\circ}$:
Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը $+13^{\circ}\text{C}$ է (հաշվարկը կատարել 6°-ով).

64

Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

65

Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

(66-67). Երկրի բնակչության թիվը 1.8 մլն է, բնական աճի գործակիցը՝ 16 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 12 400 մարդ, արտագաղթը՝ 8 520 մարդ.

66

Որոշել բնակչության մեխանիկական աճը:

67

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

68

Ռուսական «Միոնի» գիտակայանը հվ. լ. 66°-ի վրա է: Բնեռախույզները, «Միոնի» գիտակայանից դահուկներով շարժվելով 2,4 կմ/ժ միջին արագությամբ, քանի՞ ժամում կհասնեն Հարավային բևեռ:

Թուրքիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Բուսաբուծության մեջ մեծ է հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի բաժինը:
- 2) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 3) Ազգային եկամտում արդյունաբերության բաժինը զգալիորեն գերազանցում է ծառայություններին:
- 4) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ջեկերում:
- 5) Ունի զարգացած թեթև արդյունաբերություն, որի համար հումք է ծառայում սեփական գյուղատնտեսական արտադրանքը:
- 6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:

ՀՀ էլեկտրաէներգետիկայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Էլեկտրաէներգետիկան բացառապես կախված է ներմուծվող էներգակիրներից:
- 2) Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում ամենամեծը ջրաէլեկտրակայանների բաժինն է:
- 3) Ջերմաէլեկտրակայանները տեղակայված են Հրազդանում, Երևանում և Վանաձորում:
- 4) Մեծամորի աէկը միակ ատոմակայանն է Հարավկովկասյան տարածաշրջանում:
- 5) Հրազդան և Որոտան գետերի վրա կառուցվել է ջրաէլեկտրակայանների կասկադ:
- 6) Գործում են ջրային, ջերմային, ատոմային, ինչպես նաև քամու ուժով աշխատող էլեկտրակայաններ: